МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No. 04/24.3/5999-2025
«21» 11 2025թ.

«ԱՐՏԱԿ ԱԲԳԱՐՅԱՆ» Ա/Ձ-ԻՆ
ՀԱՍՑԵ Ք. ԵՐԵՎԱՆ, ՊՈՌՇՅԱՆ., 29 ԲՆ.
ՀՎՀՀ 40095185
ԷԼ. ՀԱՍՑԵ՝ abgaryan-97@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

Հարգելի պարոն Աբգարյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Գնորդ) կարիքների համար «Վառելիքի, յուղերի, հակասառեցման հեղուկների, էլեկտրական մարտկոցների, անվադողերի և ավտոլվացման նյութերի» ձեռքբերման նպատակով 2025 թվականի մարտի 05-ին հայտարարվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի արդյունքում 17-րդ և 25-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «Արտակ Աբգարյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Վաճառող) հետ 2025 թվականի ապրիլի 21-ին կնքվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/01-8» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Վաճառողը Պայմանագրի թիվ 17-րդ և 25-րդ չափաբաժիններով ստանձնել է «Գելային մարտկոց 6 CT 100A» և «Անվադող

ձմեռային (ՈՒազ Պրոֆի) 225/75R16C» ապրանքների մատակարարման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը՝ Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցին համապատասխան:

Պայմանագրի 2.4.1 և 2.4.4 կետերի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Վաճառողը պարտավոր էր Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի համաձայն Գնորդին հանձնել «Անվադող ձմեռային (ՈՒազ Պրոֆի) 225/75R16C» (այսուհետ՝ Ապրանք)՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 30-ը՝ ըստ պատվիրատուի ներկայացրած հայտի, սակայն Գնորդը սույն թվականի նոյեմբերի 12-ին abgaryan-97@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից davit.harutyunyan@hven.am էլեկտրոնային փոստի հասցեին գրությամբ հայտնել է. «Հարգելի գործընկեր ներեցեք ապրանքի բացակայության պատճառով չեմ կարող ձեզ մատակարարել չափաբաժին 25-ի անվադողերը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Հիմք ընդունելով, որ «Արտակ Աբգարյան» ԱՁ-ն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի Գնորդը միակողմանի մասնակի (թիվ 25 չափաբաժնի մասով) լուծում է N «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/01-8» ծածկագրով Պայմանագիրը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման

գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում եմ, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ Մասնակիցը վճարում է Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա Պատվիրատուն տվյալ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Տեղեկացնում եմ նաև, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները գանձելու (Պատվիրատուի կողմից բացված «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ 1150001172630300 հաշվեհամարներին փոխանցելու) նպատակով:

N «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/01-8» ծածկագրով գնման պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում 25-րդ չափաբաժնի մասով վճարելու դեպքում, այդ մասին անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիրը):

Տեղեկացնում եմ, որ եթե վճարման ենթակա գումարը փոխանցվի Պատվիրատուի կողմից բացված «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ 1150001172630300 հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՀԱՅԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ ծրագրերի իրականացման ծառայության գնումների կազմակերպման
բաժնի գլխավոր մասնագետ Մելինե Սողոյան, հեռ. 060380040